№ 46 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 26 1894 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 26 № 46

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՏԻԿԻՆ ՍՕՖԻԱ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԱՐԱԽԱՆԵԱՆՑՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնելով՝ առաջինը իր սիրելի ամուսնու, իսկ երկրորդը՝ թանգագին եղբօր

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍԱՐԳՍԵԱՆ ԿԱՐԱԽԱՆԵԱՆՑԻ

մահվան մասին, խնդրում են իրանց ազգականներին, բարեկամներին և ծանօթներին շնորհ բերել՝ ներկայ լինելու հանգուցեալի յուղարկաւորութեան հանդէսին, որ տեղի կունենայ չորեքշաբթի, ապրիլի 27-ին, առաւօտեան 10 ժամին։ Ամբիծքը կը լինի երեքշաբթի, ապրիլի 26-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Բնակարանը՝—Սադօվայա փողոց № 50, տուն Քալանթարեանցի։ 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իրաւասութեան սահմանները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կարսի նահանգի գաղթականները. Քահանայական հարցը Ղարաբաղում. Հայոց կոնցէրտ. Նամակ Նոր-Նախիջևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց գործերը Թիւրքիայում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Մեծ ռէֆօրմների շրջանից».

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

—

Հայոց եկեղեցու ոգու, նախնական կանոնների և աւանդութեան համաձայն, իւրաքանչիւր ծխական եկեղեցու ստացուածքը, գոյքը պատկանում է նրա ծխականների ընդհանրութեան և կարող է գործադրվել միայն վերջինի հաւանութեամբ և որոշումով։ Հոգևորականութիւնը, իբրև եկեղեցու պաշտօնեայ, պարտաւոր է միայն հսկել, որ այդ ստացուածքը կորստի չը մատնվի, որ ժողովրդից ընտրված երեցփոխները ամենայն հաւատարմութեամբ գործադրեն ծխական ժողովրդի որոշումները և վճիռները։ Ժողովուրդը ևս իր կողմից իր եկեղեցու շահերի պաշտպանութիւնը, ընդհանրութեան ընտրութեամբ, յանձնում է մի անձի, որ վայելում է ծխականների ընդհանրութեան կամ մեծամասնութեան համակրութիւնը և յարգանքը։

Թէ արդարև այդպէս է եղել Հայոց եկեղեցու սովորութիւնը, թէ արդարև հայոց եկեղեցու տրամադրութեան համաձայն եկեղեցու ստացուածքը, գոյքը համարվում է եղել ծխականների ընդհանրութեան սեփականութիւն և սա է միշտ հանդիսացել այդ սեփականութեան և գոյքի անմիջական տէրը, կարգադրողը և տնօրինողը, թէ արդարև հոգևորականութիւնը ունեցել է միայն վերահսկողութեան իրաւունք այդ գոյքի վերաբերմամբ, դրա ամենալաւ ապացոյց կարող է համարվել և այն, որ այդ տրամադրութիւնը, իբրև եկեղեցուց արդէն սրբագործված մի օրէնք, մուտք է գործել և 1836 թւի պօլօժէնիայի մէջ։

Այդ օրէնքի 1021 յօդուածի մէջ ասված է թէ „Հայ—Գրիգորեան եկեղեցիների կալուածների կառավարութեան ընդհանուր հսկողութիւնը պատկանում է ամեն թեմում առաջնորդին", իսկ 1028—31 յօդուածների մէջ գծագրված են երեցփոխի և ժողովրդի իրաւունքները հետևեալ կերպով. „Եկեղեցական գոյքի ամբողջութեան հսկողութիւնը, եկեղեցու արդիւնքների կառավարութիւնը, նրա գործերի մասին հետամտութիւնը պատշաճաւոր ատեաններում, եկեղեցական շինութիւնների կառուցանելը և նորոգելը, նրանց վարձով տալը և բոլոր դրանց նման գործողութիւնները երեցփոխանի պարտաւորութիւններն են կազմում։ Երեցփոխը առհասարակ գործում է իբրև ծխական ժողովրդի լիազօրը, բայց կարևոր գործերի դէպքում նա իրաւունք ունի պահանջել հասարակութիւնից առանձին հաւատարմագիր ծխականների ամբողջութեան կողմից, ըստ կարելոյն։ Ստանալով այդ հաւատարմագիրը, նա ազատվում է հասարակութեան առաջ ունեցած որ և է պատասխանատւութիւնից այն բոլոր գործողութիւնների մասին, որոնք յանձնված են իրան կատարելու այդ ժողովի մէջ։" (Յօդ. 1028)։

„Ամեն տարվայ վերջում երեցփոխը պարտաւոր է ծխականների ընդհանուր ժողովին տալ լիակատար հաշիւ իր բոլոր գործողութիւնների մասին եկեղեցու տնտեսական գործերի կառավարութեան և մանաւանդ դրամարկղի վերաբերմամբ։ Նա յետոյ ներկայացնում է այդ հաշիւը թեմական կոնսիստորիային": (Յօդ. 1031)։

Օրէնքի այս յօդուածները այլ ևս ոչ մի կասկած չեն թողնում, որ եկեղեցու ստացուածքը, գոյքը պատկանում է միայն ծխական ժողովրդին, որ երեցփոխը պատասխանատու է այդ ստացուածքի համար նրա առաջ, հանդիսանում է լոկ հաւատարմատար այդ ժողովրդի և պարտաւոր է ամենամանրամասն հաշիւ տալ նրան. իսկ տեղական հոգևոր իշխանութեանը վերապահված է միայն և եթ հսկողութեան իրաւունքը։

Հայոց եկեղեցու այդ կանոնը, բացի իրաւագիտական հիմունքից, ունի և այն մեծ բարոյական հիմքը, որ կը ստիպէ ժողովրդին անտարբեր չը մնալ դէպի եկեղեցին, պարտք կը դնի նրա վրա հոգալ նրա շահերի մասին և այսպիսով բարոյական սերտ կապ կը հաստատէր ժողովրդի և եկեղեցու մէջ։

Սակայն ներկայումս իրականութեան մէջ այլ ենք տեսնում։

Փոխանակ ջանալու այդ գեղեցիկ և վեհ սկզբունքը գործադրելու, վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում մտցնվում է մի այլ ուղղութիւն, որի զօրութեամբ եկեղեցու ստացուածքի և գոյքի իսկական տէրը և կարգադրողը հանդիսանում է ոչ թէ ծխական ժողովուրդը, այլ տեղական հոգևոր կառավարութիւնը, որի շնորհիւ երեցփոխները իրանց պարտաւոր չեն զգում հաշիւ տալ ժողովրդին և պատասխանատու լինել նրա առաջ։

Հարկ չը կայ բազմաթիւ փաստերով ապացուցանել, որ հոգևոր կառավարութիւնները, առանց ստանալու կանխապէս ծխական ժողովրդի հաճութիւնը և որոշումը, պարզապէս հրամանագրում են երեցփոխներին ներկայացնել այսքան կամ այնքան գումար և երեցփոխներն էլ, իբրև հլու գործակատարներ, կատարում են անմռունչ այդ հրամանները, որովհետև այդ տեսակ երևոյթները արդէն սովորական են դարձած։ Մի տեղ հոգևոր կառավարութիւնը պահանջում է 1000 րուբլի մի եկեղեցուց՝ առաջնորդարանի ծախքի համար, մի ուրիշ տեղ մի քանի հազար րուբլիներ՝ արտասահմանում որդեգիրներ պահելու համար, մի երրորդ տեղ 400 րուբլի՝ առաջնորդական քարտուղարի ռոճկի համար և այս ամենը առանց ծխականների գիտութեան և վճռի։

Այդ վնասակար ուղղութիւնը այնքան արդէն արմատացել է, որ եթէ երբեմն գտնվում են երեցփոխներ, որոնք հիմ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՄԵԾ ՌԵՖՕՐՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՑ»

«Изъ эпохи великихъ реформъ» —историческія справки Гр. Джаншіева.
Չորրորդ հրատարակութիւն, Մօսկվա, 1894

—

Այս աշխատասիրութիւնը ամփոփում է իր մէջ երջանկայիշատակ Ալէքսանդր II-ի թագաւորութեան ժամանակվայ ռէֆօրմների պատմութիւնը և պատկանում է տաղանդաւոր իրաւագէտ ու հրապարակախօս Գր. Ջանշեանի գրչին։ Գիրքը, շնորհիւ հրատարակութեան մարդասիրական նպատակի և նիւթի մեծ կարևորութեան, ջերմ ընդունելութիւն գտաւ ընթերցող հասարակութեան մէջ, որին լիապէս բաւականութիւն տալու նպատակով յարգելի հեղինակը այս անգամ արդէն 4-դ հրատարակութեամբ լոյս ընծայեց իր գործը մի քանի յաւելուածներով հանդերձ։ Գրքի աջողութեան ոչ նուազ նպաստեցին նաև գրութեան գեղահիւս, ոգևորիչ ոճը և այն ջերմ դրուատող ոգին, որով ներշնչված է այդ յիշատակագրութեան իւրաքանչիւր տողը։

Գիրքը բովանդակում է իր մէջ 60-ական թուականների մի շարք ռէֆօրմների պատմական էսկիզ՝ սկսած ճորտերի ազատութիւնից, որը Ռուսաստանի հասարակական կեանքի բարոյական և մտաւոր վերածնութեան արշալոյսն աւետեց. «Ոչ միայն Ռուսաստանի պատմութիւնը, ասում է հեղինակը, այլ և ընդհանուր պատմութեան տարեգրութիւնը շատ քիչ օրեր գիտէ, որոնց հետ կապված լինէին այնպիսի զուարթալից և ոգևորիչ մօմենտներ, ինչպէս 1861 թուականի մարտի 5-ի հետ»։

Այդ օրը, ինչպէս յայտնի է, հանգուցեալ կայսերի հրամանով 20 միլիօն ժողովրդի դարևոր ստրկութեան կապանքները փշրվեցին. իրաւազուրկ ճորտը դարձաւ իր հայրենիքի քաղաքացի։

Ճորտերի ազատութիւնը ցնցեց անշարժութեան մատնված կեանքը. նոր ձգտումների և իդէալների ծնունդ տալով, նա անցեալի աւերակների վրա հիմք դրեց փառաւոր շինութեան և նրա ճակատին դրոշմեց մարդկային կեանքի նուիրական սկզբունքները. ազատարար հօսանքի ազդեցութեան տակ գիշերվայ խաւարից լոյս աշխարհ եկաւ մարդը իր մարդկային իրաւունքներով և պահանջներով, այն մարդը, որի անունը, ըստ հին աշխարհահայեցողութեան, գրաստ էր, մի անբան իր։

Նոյն մարդասիրական ոգով ներշնչված էին և յաջորդ տարիների ռեֆօրմները,—գարնանային բոյսերի նման նրանք կեանք ստացան շուրջը տիրած ջերմութիւնից՝—մարմնական պատժի վերացումը, դատաստանական ռեֆօրմը, ցենզուրական նոր կանոնադրութիւնը, զեմստվօյի ինքնավարութիւնը, անցեալ թագաւորութեան այդ փայլուն յիշատակները՝ հասարակական մտքի զարգացման նոր դարագլուխ կազմեցին։

Բայց վարդն էլ զերծ չէ ծակոտող փշից. այդ ազատամիտ շարժման հակադիր թշնամական հոսանքը իր չարաշշուկ լեզուով քիչ չէր արգելում գործի առաջադիմութեան և խանգարում նրա յաղթական ընթացքը։ Սակայն ի վերուստ խրախուսված բարի եռանդը խորտակեց իւրաքանչիւր նոր գործին ուղեկից արգելքները. մարդկանց սև նախանձը, նրանց չար կիրքը պէտք է լռէր և անմռունչ խոնարհվէր կեանքի դրած պահանջների առաջ։ Ալէքսանդր II-ի ռեֆօրմների հիմքը և ոգին քրիստոնէական մարդասիրութեան բարձր սկզբունքներից բղխած լինելով՝ աւելի արագ պատուաստվեց կեանքի մէջ, քան ենթադրում էին. հանգուցեալ կայսրը իր կեանքի ամենաերջանիկ օրերում տեսաւ այդ պատուաստման անդրանիկ պտուղը. դա առաջին ծաղիկն էր այն նորատունկ ծառի, որն այնքան թարմութիւն և կենդանութիւն տուեց շուրջը տիրած անշարժութեան։

Այդ լուսափայլ շրջանի նշանակութիւնը և կատարած դերը աւելի աչքի է ընկնում, եթէ համեմատական տեսութեան առնենք նրա նախընթաց պերիօդը։ Ի միջի այլ պատմական փաստերի, այդ մասին որոշ գաղափար է տալիս մեզ սլաւօնաֆիլեան կուսակցութեան պարագլուխ Ի. Ակսակօվ իր մտերիմներին ուղղած մի շարք նամակներում *)։ 50-ական թուականներին, պատերազմի ժամանակ, պաշտօնական յանձնարարութեամբ պտտելով Ռուսաստանի ներքին նահանգները և չփվելով ժողովրդի զանազան խաւերին Ակսակօվ, իր բնաւորութեան յատուկ անկեղծութեամբ, իր տպաւորութիւնները յայտնեց բարեկամներին և մանաւորապէս իր եղբօրը՝ Կոստանդինին, նամակագրութեան մէջ։ Մեր առանձին ուշադրութիւնը գրաւեց հանգուցեալ հրապարակախօսի մի խոստովանութիւնը, որ նրա կուսակցութեան տեսակէտից պէտք է ընդունվէր իբրև հերձուածողական։ Նկարագրելով գաւառական կեանքի մութ կողմերը, պաշտօնական անձանց զեղծումները, նրանց տգիտութիւնը, մտաւոր և բարոյական զարգացման ստոր աստիճանը, նա ասում է, որ եթէ ճանապարհորդութեան ժամանակ նրան պատահում էին մերթ ընդ մերթ մարդիկ, որոնց մէջ կար խիղճ, զարգացում և բարոյականութիւն, այդ Վիսսարիօն Բելինսկու հետևողները և յարգողներն էին։ Ի. Ակսակօվ, մեծ կրիտիկոսի երդուեալ հակառակորդը, ի մեծ ցաւ սլաւօնաֆիլների, մերկացնում է իրական կեանքի տխուր պատկերը, յարելով վերոյիշեալ խօսքերը. միայն Ակսակօվի շիտակ բնաւորութիւնը կարող էր մոռացութեան տալ կուսակցութեան շահերը և այդքան դառն ճշմարտութիւն հաղորդել բարեկամներին։

Ճորտերի ազատութեան բնական հետևանքն եղաւ և յաջորդ ռեֆօրմների անարգել իրագործումը։ 1863 թւի ապրիլի 17-ին, բարձրագոյն հրովարտակով մարմնական պատիժը վերացաւ և յանցաւորների մինչև այդ ժամանակ կրած անպատում չարչարանքները անցան աւանդութեան շրջանը *)։ Շպիցրուտէն, ռնգատումն, զանահարութիւն և այլ ամարդի չարչարանքներ, որոնք հին սիստեմի քրէական պատժի հիմքն էին կազմում, պատժական օրէնսդրութիւնից իսպառ ջնջվեցին։ 1865 թ. ապրիլի 6-ի օրէնքով, ռուսաց մամուլը ազատվեց նրա կանոնաւոր զարգացումը կաշկանդող ճնշումներից։ Ի. Ակսակօվի «День» լրագիրը, մեծ նշանակութիւն տալով նոր օրէնքին, իր առաջնորդող յօդուածը հետևեալ խօսքերով է սկսում. «Վերջապէս այսօրվայ համարը դուրս է գալիս առանց գրաքննութեան. այսօր առաջնորդող գրելիս մենք գիտենք, որ կը կարդանք մեր տողերը նոյնութեամբ, ինչպէս գրված են. այսօր մենք պարտական չենք այլ ևս յարմարվել ուրիշի ճաշակին և աշխարհահայեցողութեան. այսօր ոչ ոք չի խանգարի մեր աշխատանքը, չի ճնշի մեր միտքը, չի կաշկանդի մեր գրիչը, ընչապատ չի անի մեզ ոչ ոք վերջապէս, և մենք տակաւին չը լսված իրաւունք կը ստանանք առանց կեղծելու և ստելու խօսել մեր սեփական և ոչ փխտուլանչի, անբնական ձայնով»։ Հին կարգերի մասին ակնարկելով, Ակսակօվ շարունակում է.

---

*) Այդ նամակները՝ իբրև վերին աստիճանի խորհրդաւոր պատմական վկայութիւն անդրռեֆօրմեան ժամանակի մասին՝ հրատարակված են «Вѣстникъ Европы» ամսաթերթի անցեալ տարվայ համարներից մէկում։

*) Իբրև բացառութիւն, մարմնական պատիժը գործ է դրվում այժմ էլ միայն օրինազանց գինուորների համար։

վելով օրէնքի վրա, բողոքում են առանց ծխական ժողովրդի յօժարութեան կատարւող ծախսերի կարգադրութեան դէմ, նրանց բողոքը համարվում է անտեղի ու աւելորդ և թողնվում է առանց հետևանքի:

Դժուար չէ գուշակել, որ այդ ուղղութիւնը, հակառակելով Հայոց եկեղեցու ոգուն, կանոնին և նոյն իսկ գործադիր օրէնքին, խախտում է ժողովրդի իրաւունքը, անտես է առնում նրան և դրանով ընտելացնում է նրան անտարբերութեան դէպի եկեղեցին և օտարացնում է նրանից: Ժողովուրդը այլ ևս իրան չէ համարում եկեղեցու տէր և պարտաւոր հոգալու նրա շահերը, որովհետև նրա իրաւունքը և պարտաւորութիւնները անցել են հոգևոր կառավարութեան և երէցփոխների ձեռքը և վերջինները դարձել են լոկ հոգևոր կառավարութեան հլու գործակատարներ: Եկեղեցու գոյքը, ստացուածքը տնօրինում, կառավարում է հոգևոր կառավարութիւնը կամ երէցփոխը և ծխական ժողովրդին նոյն իսկ տարին մի անգամ հաշիւ տալը պարտաւորիչ չէ համարվում:

Բոլորովին այլ հետևանքներ կը ստացվէին, եթէ օրէնքի տրամադրութեան համաձայն, իւրաքանչիւր տարվայ սկզբին գումարվող ծխականների ընդհանուր ժողովում կազմվէր եկեղեցու ելևմտական նախահաշիւը, քննվէր, հաստատվէր և ապա առաջարկվէր հոգևոր իշխանութեան վաւերացման, նոյնպէս և տարվայ վերջում նոյն ժողովը քննէր հաշիւները:

Բացառիկ և ստիպողական դէպքերում կարելի է արտակարգ ընդհանուր ժողով գումարել և տնօրինել ինչ որ պէտք է:

Կամենում էք կապել ժողովուրդը եկեղեցու հետ, ստիպել նրան հետաքրքրվել եկեղեցու շահերով, յորդորել, խրախուսել նրան դէպի եկեղեցասիրութիւն, վերականգնեցէք ամբողջութեամբ նրա իրաւունքները, թողէք, որ նա ինքն կարգադրէ իր եկեղեցու ստացուածքը, գոյքը, իսկ հոգևոր կառավարութեան վերապահեցէք միայն վերահսկողութիւնը, որը նրա պարտաւորութիւնը և իրաւունքն է, բայց որը իսկապէս չէ գործադրւում:

Զրկելով ծխականներին իրանց իրաւունքներից, դուք շարժում էք եկեղեցու հիմքը, որ նոյն իսկ ժողովուրդն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Որոշված է մայիսին վերադարձնել բոլոր գաղթականներին, որոնք օրինաւոր անցագիր չեն ունենայ: «Կը մեռնենք՝ չենք գնայ»,—ահա գաղթականների պատասխանը, երբ ասում էք նրանց, որ նոյն իսկ ուժով կարող են նրանց իրանց երկիրը դարձնել, եթէ կամովին չը ցանկանան վերադառնալ: Այժմ գաղթականների մէջ նկատվում է յամառ աշխատանք որ և է կերպով անցագիր ձեռք բերելու. սակայն դա բաւական ծանր է. նրանցից որը գոնէ համիդիյէ անցագիր ունի, էժան է պրծնում, իսկ ով որ ոչինչ թուղթ չունի (և գրեթէ մեծամասնութիւնը այդպէս է) հարկաւոր է լինում իւրաքանչիւր անցագրի համար 10 րուբլուց աւելի մսխել, իսկ ընտանիքի համար 30-ից շատ: Դա, ի հարկէ, գաղթականների համար ծանր հարկ է, բայց և այնպէս յուսահատութիւնը և հայրենիք չը վերադառնալու ցանկութիւնը այնքան սաստիկ է դրանց մէջ, որ ամեն միջոցի դիմում են ձեռք բերելու հարկաւոր գումարը:

Կարսի փողոցներից մէկի վրա, մի փոքրիկ տան մէջ ապրում է ինչ որ մի տաճկաստանցի աղա, որի մօտ անընդհատ մտնում և դուրս են գալիս տաճկաստանցի գիւղացիներ: Հետաքրքրվեցանք իմանալ թէ ինչ մարդ է դա. յայտնվեց մէկը այն բազմաթիւ վաշխառուներից, որոնցով լի է այժմ մեր կողմերը: Ողորմելի ժողովուրդ, որ այդ սարդերից ազատութիւն չունի և ուր էլ լինի՝ կամովին գնում, գցում է իրան նրա ոստայնների մէջ:

Սակայն դիցուք հէնց մեր գաղթականները ձեռք բերին անցագրեր: Ի՞նչ պէտք է անեն նրանք այնուհետև: Հող նրանց չեն տայ. դա այնքան անկասկած է, որքան երկու անգամ երկու չորս, և չեն էլ կարող տալ, քանի որ ինքը տեղական երկրագործ ժողովուրդը հողի անասելի պակասութիւն ունի: Կարսը արդիւնաբերական քաղաք չէ, որտեղ նրանք կարողանային մի որ և է պարապմունք գտնել, թէկուզ մշակութիւն անել: Լինում են երբեմն կառավարչական շինութեան գործեր, բայց դրանց վրա յոյս դնել չէ կարելի: Յարմար պարապմունք չը կայ. հարուստներ և ունևորներ չը կան, որոնց մօտ ծառաներ մտնեն և վերջապէս ներկայ դարում ո՞վ է գժվել ահագին ընտանիքով ծանրաբեռնված աղքատներին ծառայ վարձել:

Ոչ մի ժամանակ Ջատկի տօնը մեզ վրա այնքան ծանր տպաւորութիւն չէր թողել, որքան այս տարի. ամբողջ եկեղեցին լի էր այդ թշուառներով, ցնցոտիների մէջ, երեխաները գրկներին... վիզները ծուռ...

Ինչ պէտք է լինի դրանց վիճակը, ակամայից մարդ հարցնում է ինքն իրան. մի քանի օր էլ և ահա մայիսը կը մօտենայ: Հիմա դեռ կան ձեռքեր, որոնք պահում, պահպանում, հաց են տալիս դրանց. իսկ յետոյ... ախար չէ՞ որ այդ տեսակ ողորմութիւն երկար չէ կարող տևել. չեն կարող հօ մարդիկ տարիներով կերակրել մի բազմութիւն, որը ծովի ալիքի պէս անընդհատ գալիս է մի կողմից:

Հարկաւոր են արմատական միջոցներ, որոնք հնար ունենային այդ հոսանքը կանգնեցնել, հնար ունենային հոգալ այդ մարդկանց վիճակը իրանց երկրում, իրանց տեղում. այլապէս մենք կունենանք մեր կողքում մի նոր Պարսկաստան, որտեղից ամեն տարի մեր երկիրը կը թափվեն մշակութեան համար հազարաւոր թշուառներ: Սակայն պարսիկները գալիս են առանց ընտանիքի, նրանք վերադառնում են կրկին իրանց երկիրը, մինչդեռ Թիւրքաց-Հայաստանից գալիս են առանց առաջները նայելու, առանց ապագան մտածելու:

Կարս. Աբ. Ապ.

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄՈՒՄ

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի յօդուածը, տպագրված «Մշակի» № 41-ի մէջ, ուրախալի տպաւորութիւն թողեց մեր քաղաքի ընթերցող հասարակութեան վրա: Նոյն իսկ մեր սագերը, որոնց ներկայացուցիչները Թիֆլիսում նստած՝ կոկորդիլոսի արտասուք են թափում, համոզմունքով խոստովանում են յօդուածի անաչառութիւնը:

Ոչ մի վիճակ, չենք կարծում, այնքան խղճալի լինի և այնքան այրված, խորովված տգէտ և բազմաթիւ քահանաների կողմից, որքան Ղարաբաղը: 16,000 ծուխ ունեցող թեմը, բացի քաղաքներից, որ ասել է 200 գիւղ կամ եկեղեցի, ունի 220 քահանայ: Իւրաքանչիւր քահանայի վրա ընկնում է մօտաւորապէս 60 տուն. իսկ մօտ քսան գիւղ ունի երկու-երկու քահանայ: Կան այս բօպէիս և տասնաչափ տիրացուներ, որոնց երդուեալ փաստաբանները ամեն օր հոգևոր իշխանաւորների դռները ծեծում են և կեղծ մղկանքներով հաւատացնել տքնում, թէ՝ մեռելները փտեցին, քահանայ չը կայ, տուէք մեզ քահանայ: Բայց... քաղաքումս ամիսը, մինչև իսկ շաբաթը մի քանի անգամ սունկի պէս երևում են գիւղական քահանաներ, որոնք զանազան խաբեբայական միջոցներով ձեռնադրվել են այս և այն գիւղերի վրա, բայց ժողովուրդն այսօր միանգամայն չէ ճանաչում նրանց:

Փաստերով խօսենք:

Ո՞վ չէ պատահում ամեն օր ճարտարեցի տէր— Ստ. Վարդապետեանին, որ Մօխնա գիւղի վրա ձեռնադրվել է և այսօր ժողովուրդը նրան չէ ճանաչում. իսկ ինքն ամեն օր մաշում է առաջնորդի և կօնսիստորիայի դռները և ժողովուրդ խնդրում:

Ո՞վ կարող է ուրանալ, թէ Մեղրեցոց եկեղեցու լուսարար Բարսեղը չէ ձեռնադրվել Խծաբերդ գիւղի վրա և աշխատողներ չը կան նրան քաղաքի եկեղեցին բերելու:

Եւ մինչև այսօր նա անծուխ է:

Ո՞վ չէ տեսել ոմն Մամիկոնեան նորընծայ քահանային, որ ձեռնադրվել է մի գիւղի վրա, որի անունը չենք յիշում, իսկ գիւղացիք բնաւ տեղեկութիւն չունեն և այսօր խեղճը մնացել է սոված իր բազմամարդ գերդաստանով:

Ո՞վ չը տեսաւ երկու շաբաթ սրանից առաջ Մօսէս անունով մի ութսուն տարեկան ծերունու, որ ժառանգում է իր հանգուցեալ քահանայ որդու ծուխը՝ քահանայ ձեռնադրվելով շնորհիւ այն հանգամանքի, որ այսօր ամեն մի ականջ լսել և ամեն մի բերան խօսում է, այն է՝ որ նրա որդին էջմիածնումն է ծառայում, իսկ հայրը, թէկուզ էլ անգրագէտ, փափագել է քահանայ դառնալ և ապա մեռնել... Աշխարհի սկզբից մինչև այսօր սա տարօրինակ երևոյթ չէ՞ համարվում. ո՞վ է տեսել, որ որդու մահից յետոյ նրա գահը ժառանգէ հայրը:

Այս զառամեալ նորընծան հինգերորդ քահանան է այն գիւղի մէջ, որի վրա նա ձեռնադրվեց, իսկ վեցերորդը ձեռնադրվեց նրանից հինգ օր յետոյ: Չէք հաւատում, կամենաք քահանաների անունները մէկ մէկ յիշենք,— տէր-Խաչատուր, տէր-Պետրոս, տէր Յովհաննէս, տէր-Պօղոս, տէր-Մօսէս և տէր-Գրիգոր. իսկ գիւղը՝ Կուսապատ:

Մենք նմուշի համար առաջ բերեցինք այստեղ շատերից մի երկու փաստ, որպէս զի մեր ասածը սուտ չը համարեն նրանք, որոնց յատկութիւնն է միշտ ստել և կեղծել, գոռալ և գոչել՝ թէ հայհոյեցին մեզ, սրբապղծեցին ժողովրդի ազնիւ զգացմունքները, յարձակվեցին հոգևորականութեան դէմ... Ապա ինչ, ծածկել վէրքը, որ փտի

«Քիչ անարդարութիւն կար մեր հասարակական զարգացման ամբողջ կազմակերպութեան մէջ, մենք հասանք այն դրութեան, որ ինքն խօսքը ծուռ արտայայտութիւն ստացաւ. հեղինակը այնքան չէր մտածում իր միտքը կարելոյն չափ պարզ յայտնել, որքան նրան մաքսանենգ ապրանքի պէս քարշ տալով՝ փախցնել դիտող պահապանների միջով, որից առաջացաւ տողերի մէջ կարդալը, պայմանական լեզուն: Գրողը կատարելապէս կախված էր լինում ոչ թէ գրաքննական հաստատուն կանոններից, այլ ուրիշի մտքից և ճաշակից, ուստի մամուլի տակից խօսքը դուրս էր գալիս այլանդակված և աղաւաղված»: Ակսակովի այդ բնորոշ խօսքերի մէջ ամեն բան ասված է, ինչ որ զգում էր այն ժամանակվայ ինքնաճանաչ ինտելիգենտը:

Վերջապէս Ալեքսանդր II-ի ամենանշանաւոր ռեֆորմներից մէկն էլ եղաւ—դատաստանական նոր կանոնադրութիւնը (1864 թ. նոյեմբերի 24), որի գծագրած սկզբունքները արդարադատութեան հիմքը հաստատեցին նոր դատարաններում. դռնփակ ատեանների ձևական դատավարութիւնը լայն ասպարէզ էր բացանում ամեն տեսակ զեղծումների և կողմնապահութեան. անաչառութեան վրա հիմնված օրէնքը այնքան հեղինակութիւն չունէր, որ պաշտպանէր դատարան դիմողի արդարացի իրաւունքները և պահանջները. այդ դէպքում մեծ նշանակութիւն էին ստանում մարդու հասարակական դիրքը, ծագումը, նիւթական կարողութիւնը և այլ արտաքին հանգամանքներ, որոնց ազդեցութիւնը ակներև նկատվում էր նախկին դատավճիռների մէջ: Ալեքսանդր II-ի դատաստանական կանոնները հիմնայատակ արին հին դատարանի խարխուլ շէնքը և ստեղծելով կեանքի և մարդկային բարօրութեան համար նոր օրէնքներ՝ արդարադատութեան գործը իրան արժանավայել բարձրութեան հասցրին. կեանքի զօրեղ հոսանքը դռնփակ ատեանի դռները առանց բաղխելու բացեց, լսվեց առաջին անգամ դատաւորի ձայնը բազմութեան առաջ, արդարութիւնը և ողորմածութիւնը հռչակվեցին իբրև հիմք դատավճռի, հաւասարութիւն օրէնքի առաջ, անկողմնապահութիւն, անաչառութիւն եղաւ սկզբունք դատավարութեան, վերջապէս կամայականութեան աւերակների վրա, մի հռետորի ասելով, տիրեց օրէնքը...

Լրագրութեան սուղ էջերը մեզ թոյլ չեն տալիս բազմակողմանի տեսութեան առնել Ալեքսանդր II-ի ռեֆորմների պատմութիւնը. ընթերցողը մեծ հետաքրքրութեամբ կարող է ծանօթանալ այդ ժամանակին վերաբերեալ պատմական նիւթի հետ Գր. Ջանշեանի աշխատասիրութիւնից, որը գրական մեծ արժանաւորութիւնների հետ միացնում է իր մէջ իւրաքանչիւր ինտելիգենտին անհրաժեշտ գիտելիք 60-ական թւականների մասին, մի ժամանակաշրջանի մասին, որից գարնանային արթնացնող և կենդանացնող շունչ է փչում:

Նուիրելով այս տողերը Գր. Ջանշեանի գրքին, մենք չենք կարող մի քանի խօսք չասել և հեղինակի մասին: Կան մարդիկ—և այդպիսիների թիւը շատ սակաւ է—որոնց գաղափարները և համոզմունքները նրանց խղճի սրբութիւն սրբոցն են. յետ նահանջել կամ սակարկութեան դիմել յետադիմութեան ճնշման տակ այդ մարդիկ չը գիտեն, այլ անկախ իրանց շուրջը տիրող մտաւոր անտարբերութիւնից և ամայութիւնից, նրանք պաշտպանում են իրանց դաւանանքը լի յուսով յառաջխաղացութեան գործի վերջնական յաղթանակի վրա: Այդ սակաւաթիւ ընտիր գրողների շարքից է Գր. Ջանշեան, որի անունը ռուսաց գրականութեան մէջ արդէն իր արժանաւոր տեղն է բռնել:

Ուղղութեամբ ջերմ առաջադիմական, բնաւորութեամբ չիտակ՝ յարգելի հրապարակախօսը, պարբերական հրատարակութիւնների մէջ ցրված իր բազմաթիւ յօդուածներում, միշտ պաշտպան է հանդիսանում մտքի և սրտի ազնուութեան. նրա սուր գրիչը խաւարի հերոսների անհաշտ թշնամին է: Երբ այդ բանակից արշաւանք է սկսվում մի յարգելի անձնաւորութեան, կամ օգտաւէտ հիմնարկութեան դէմ, արատաւորելու կամ ստուեր գցելու նենգ նպատակով, Գր. Ջանշեան, իր բնածին լոգիկայի ույժով, յետ է մղում նենգամիտ խաւարամիտների անկարգ հրոսակը, մերկացնելով մի և նոյն ժամանակ նրանց խարդախ ոգին և մտաւոր սնանկութիւնը: Երբ յայտնի ուղղութեան մամուլը ծամածուռ տեսութիւններով սիստեմաբար յեղաշրջում է անցեալ ռեֆորմների հիմնական սկզբունքները, Գր. Ջանշեան, գիտութեան ամբողջ պաշարով, հրապարակ է դուրս գալիս գրպարտութեան դէմ մաքառելու: Եւ որքան գրաւիչ է և համոզեցուցիչ նրա ջերմ ապոլոգիան, որքան հրապուրիչ է նա 60-ական թւականների լուսամիտ փաստաբանի դերում...

Մի ժամանակ, 15 տարի սրանից առաջ, մեծ աղմուկ հանեց հասարակութեան և մամուլի մէջ յայտնի իրաւագէտ Լօխվիցկու մի անմաքուր գործի պաշտպանութիւնը, որի համար նա դատի էր ենթարկվել *): Գր. Ջանշեան իր ձայնը բարձրացրեց ի պաշտպանութիւն փաստաբանութեան այն իդէալի, որ չը գիտէ բաժանել օրինականութիւնը բարոյականութեան սկզբունքներից, այլ միախառնում է մէկը միւսի հետ, այդ ներդաշնակութեան մէջ որոնելով իր raison d'être-ը:

Նորերս վախճանվեց Պետերբուրգի դատարանական շրջանի յայտնի փաստաբան Ունկօվսկին, 60-ական թւականների ազնիւ գործիչը, և ահա «Русскія Вѣдомости» լրագրի մարտ ամսի վերջին համարում Գր. Ջանշեան, գրուատելով հանգուցեալի անբիծ կեանքը և գործունէութիւնը, կրկին վերադառնում է փաստաբանութեան էթիկայի փափուկ խնդրին, օրինակ բերելով Ունկովսկուն, ռուս փաստաբանութեան այդ պարծանքը, ինչպէս մեծարած էր հանգուցեալը 25 ամեայ յոբելեանի առիթով նրան մատուցած ուղերձի մէջ:

Գր. Ջանշեան, ծառայելով ռուս գրականութեան, հեռու հիւսիսից հետևում է և մեր կեանքի առօրեայ երևոյթներին: Մեր ընթերցող հասարակութիւնը անշուշտ շատ անգամ առիթ է ունեցել կարդալու նրա լուրջ յօդուածները մեր կեանքի այս կամ այն կարևոր խնդրի մասին:

1892 թւի վերջում իր մահկանացուն կնքեց անմոռանալի Գր. Արծրունին, հայկական մամուլի փառքը և պարծանքը. Նոյն Ջանշեան հանգուցեալի յիշատակին նուիրեց մի զգացուած յօդուած, ուր վառ գոյներով նկարագրուած է անզուգական գործիչի մատուցած ծառայութիւնը հայ գրականութեան: Մակար կաթողիկոսի մահից յետոյ հայ հասարակութեան միտքը զբաղեցնող խնդիրներից մէկն էր նոր կաթողիկոսի ընտրութիւնը, և ահա Գր. Ջանշեան ծանօթացնում է ռուս հասարակութիւնը կաթողիկոսութեան առաջին թեկնածու ներկայ վեհափառ Հայրապետի անցեալի հետ:

Եւ իր բոլոր գրուածքներում Գր. Ջանշեան հաւատարիմ է և խիստ հետևող առաջադէմ, ազնիւ ուղղութեան. մասնագիտական յօդուած է, թէ հրապարակախօսական, ուղևորի յիշողութիւն է, թէ քննադատական էսքիզ, նրա գրչի արտադրութիւնները յափշտակիչ արտաքինի հետ պարունակում են հարուստ բովանդակութիւն:

Ներկայ աշխատութիւնը հեղինակը նուիրում է առաջադիմութեան պանծալի պիոնէրի յիշատակին, Վիս. Բելինսկուն, որի մահվան 45-ամեակը անցեալ տարի մայիսին լրացաւ:

Ցովհ. Սպենդիարեան

---

*) Յետոյ սենատի վճռաջինջ ատեանը, քննելով Լօխվիցկու բողոքը՝ արդարացրեց նրան:

մարմնի մորթու տակ և ապականէ ամբողջ կազմը։

Եթէ Ղարաբաղի թեմին այսօրվանից սկսած ամենաքիչը քսան տարի քահանայ չը տան, եղածը նրան հերիք է և ոչ մի տրտունջ չի յարուցանի որ և է հասարակութիւն, միայն թէ չը գրգռեն նրան տգէտ տիրացուների բարեկամները և հոգևոր իշխանութեան դուռը չը ղրկեն։

Ջուր է միանգամայն շտապել հաւատ ընծայելու հասարակութեան այն ներկայացուցիչներին, որոնք առաջին անգամ առաջնորդարանի դռներն են մաշում. պէտք է մտնել, անձամբ մտնել ժողովրդի մէջ և չափել նրա ցաւը. այն ժամանակ կը տեսնէք, որ հնար կայ տգիտութեան դէմ մաքառելու։ Հարևան գիւղն ունի երկու քահանայ, իսկ քահանայ խնդրող գիւղը հինգ վերստի վրա է կանգնած այդ գիւղից։ Քահանայ ունեցող գիւղը քառասուն ծուխ է, իսկ մօտիկ գտնված 10—15 տուն ունեցող գիւղը քահանայ է խնդրում։ Եւ սրանք համարվում են դժուարութիւններ…

Թողէք, ի սէր Աստուծոյ, ձեր փարիսեցիական բողոքները. մի չէզվէք խնդրի իրականութիւնից, ուղիղ նայեցէք կեանքին և կը տեսնէք, որ քահանաներ շատ ունենք։ Անարդարութիւն է կաշառքով տգէտ քահանաները բազմացնել ու մեղքը ժողովրդի վրա գցել։

Շուշի. Տ.

ՀԱՅՈՑ ԿՕՆՑԷՐՏ

Ապրիլի 23-ին բաւականաչափ հասարակութիւն էր հաւաքված արքունական թատրոնը՝ լսելու մեր եռանդուն երաժշտապետ Կարա-Մուրզայի կօնցէրտը։ Հասարակութեան մեծ մասը թերահաւատ էր դէպի կօնցէրտի աջողութիւնը այն պատճառով, որ չէր հաւատում թէ կարելի է մի ամսվայ ընթացքում բոլորովին նոր մարդիկ խմբել, նրանց վարժեցնել խմբական քառաձայն կանօնաւոր երգեցողութեան մէջ, և բեմ դուրս բերել։

Սակայն կօնցէրտը միանգամայն զարմացրեց թերահաւատներին.—բեմի վրա կանգնած խումբը,—բաղկացած երկու սեռի 80 հոգուց, որոնցից մօտ 20 օրիորդներ և տիկիններ հագնված էին Ախալցխայի ժողովրդական գեղեցիկ հագուստով,—իր ներդաշնակ, կանօնաւոր երգեցողութեամբ միանգամայն գոհացրեց հասարակութեանը, որը բուռն ծափահարութիւններով պահանջում էր կրկնել երգերը։

Մանաւանդ առանձին բերկրութիւն պատճառեցին «Լօրիկ», «Գացէք տեսէք ով է կերել զէծ» և «Մուկուչ ապեր» ժողովրդական երգերը։ «Լօրիկ» երգը, որի solo-ն երգեց երիտասարդ Բարխուդարեան բաւական աջող, հասարակութեանը մեծ զուարճութիւն պատճառեց։ Անաջող դուրս եկաւ միայն, երկրորդ բաժնում՝ «Ով մահկանացու» երգը։

Ինչպէս երևում է, ամբողջ խումբը գովասանքի արժանի սիրով է վերաբերվել դէպի գործը, որ այդքան կարճ միջոցում կարողացել է պատրաստվել և արդարացնել եռանդուն խմբապետի աշխատանքը։ Կօնցէրտի աջողութիւնը մեծ կը լինի, եթէ խումբը ունենայ աւելի աջող սօլօ-ներ, որովհետև այժմեան սօլօ երգողներից մի քանիսը անաջող են։

Կարա-Մուրզայի խմբի երկրորդ կօնցէրտը լինելու է, ինչպէս լսեցինք, առաջիկայ շաբաթ օր, նոյն դահլիճում, յօգուտ սովեալների։ Դրանից յետոյ մտադրութիւն կայ տալու մի երրորդ կօնցէրտ, էժան գներով, բուն ժողովրդի համար։

Մեզ մնում է միայն կրկին անգամ ցանկանալ լիակատար աջողութիւն այդ տոկուն երաժշտին՝ իր համակրելի գործունէութեան մէջ։

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Ապրիլի 10-ին

Նոր-Նախիջևանի դումայի ապրիլի 8-ի նիստին ձայնաւոր Գր. Չալխուշեան մի հարց առաջարկեց պ. քաղաքագլխին, թէ՝ արդեօք ինչ գումարի է հասել հանգուցեալ նոր-նախիջևանցի Ն. Ն. Աճեմեանի կտակած փողը և որտեղ է պահվում այդ գումարը։

Հարցը հասկանալու համար պէտք է աչքի առաջ ունենալ, որ համարեա 10 տարի առաջ մեռնում է Ն. Ն. Աճեմեան, իր կայքերի մեծ մասը թողնելով քաղաքային վարչութեան, որպէսզի իր կնոջ մահից յետոյ՝ Նոր-Նախիջևանում բացվի տեխնիկական դպրոց, ուր պարտաւորիչ լինի հայոց լեզուի և կրօնի դասատուութիւնը հայերի համար։ Ընդամենը կտակած գումարը 150 հազար րուբլու չափ է։ Բայց ահա անցնում են տասնեակ տարիներ, այդ փողերով գնվում են տներ, շարունակվում է հանգուցեալի առուտուրը, իսկ կտակակատարները՝ պ. Ս. Յարութիւնեան, Գ. Քէչեճեան և տ. Աճեմեան ոչ մի հաշիւ չեն տալիս դումային։ Այդ դեռ զարմանալի չէ, զարմանալին այն է, որ ամբողջ դուման վրդովված է և ոչ ոք մինչև մինչև այժմ հաշիւ պահանջած չէր խաթրու, անուշ խաթրու համար…

Պ. քաղաքագլուխը չը կարողացաւ պատասխանել պ. Չալխուշեանի հարցին։ Նա ասեց, որ վարչութիւնը ոչ մի տեղեկութիւն չունի և մինչև օրս չը գիտէր, արդեօք կարելի է հաշիւ պահանջել կտակակատարներից։ Եւ ինչ էք կարծում. դուման քննում է՝ պահանջել հաշիւ, թէ ոչ։ Դուման որոշում է կազմել մի յանձնաժողով, որը պէտք է մշակէ այն հարցը. թէ արդեօք կարելի է պահանջել կտակակատարներից հաշիւ, թէ ոչ։ Դա է փաստը։ Հարկաւոր են միթէ մեկնութիւններ. չենք կարծում, որովհետև դա ճիշդ պատկերն է մեր հասարակական գործունէութեան։ Միմիայն խաթրն է, որ պահպանում ենք, իսկ հասարակական շահերը մեր սրտերից հեռու են և աւելի հեռու, քան լուսինը…

X.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետեվ Պետերբուրգից վերադարձաւ Թիֆլիս։

—

Կ. Պօլսից մեզ գրում են, որ Թիւրքաց կառավարութիւնը յամառութեամբ չէ ուզում ընդունել Աշըգեանի հրաժարականը, և ամեն ջանք գործ է դնում, որ նա պատրիարք մնայ։ Եթէ վերջ ի վերջոյ պատրիարքի հրաժարականը ընդունվի, կառավարութիւնը դիտաւորութիւն ունի թոյլ չը տալու, որ Ազգային ժողովը գումարվի՝ նոր ընտրութիւն անելու, այլ ուզում է Աշըգեանի փոխարէն նշանակել մի հայ եպիսկոպոս, փոխանորդի պաշտօնով, երկար ժամանակի համար։ Կառավարութեան կողմից նշանակվող փոխանորդի պաշտօնի համար ի նկատի ունեն, ի միջի այլոց, յայտնի Բարթուղիմէոս եպիսկոպոսին։

—

Պաշտօնապէս յայտարարված է, ապրիլի 17-ից,—դէյստվիտելնի ստատսկի սովետնիկի աստիճան տրված է Էջմիածնի հայոց սինոդի պրոկուրոր Կանչելուն։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց շնորհել Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէին՝ Ս. Ստանիսլավի շքանշան 1-ին աստիճանի և Ս. Վլադիմիրի շքանշան 3-րդ աստիճանի՝ Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանին։

—

Ապրիլի 23-ին, ս. Նշան եկեղեցու ծխական դպրոցի դահլիճում կայացաւ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին մօտ 60 անդամուհիներ։ Կանօնադրութեան համաձայն, ժողովին պէտք է նախագահէր թեմական առաջնորդը, բայց որովհետև մինչև ժամը 1-ը թեմական առաջնորդը ոչ ինքն եկաւ, ոչ էլ մի քահանայ ուղարկեց իր փոխարէն նախագահելու, ժողովը, հակառակ վարչութեան ցանկութեան, որ առաջարկում էր յետաձգել նիստը, ընտրեց նախագահուհի տիկին Բաբայեանցին։ Անցեալ տարվայ հաշիւը հաստատելուց յետոյ, ժողովը քննեց և հաստատեց ներկայ տարվայ նախահաշիւը։ Մուտք նախահաշուած էր 6550 րուբլի, ծախս՝ 6122 րուբլի, որից 3688 րուբլին կար ու ձևի դպրոցի համար և 2424 րուբլին՝ ս. Նշան եկեղեցու դպրոցի և այլ մանր ծախսերի համար։ Ժողովում վիճաբանութեան առարկայ դարձան հաշուի մի քանի կէտերը։ Անդամների շատերի կարծիքով, հաշիւը չէ հրատարակված մանրամասն, իսկ մի քանի ծախսերի մասին բոլորովին չէ յիշված հաշուի մէջ։ Օրինակ, յայտնվեց որ խոհարարական կուրսերի վարձերը ստանում են առճիկ, բայց ընկերութեան վարչութիւնը իր հաշուի մէջ յիշում է միայն այդ կուրսերից ստացած զուտ արդիւնքը 235 ր., իսկ թէ որքան ընդհանուր մուտք է եղել, որքան ծախս, այդ մասին լռում է։ Ժամանակը ուշ լինելու պատճառով՝ ընտրութիւնները յետաձգվեցին ուրիշ անգամի։

—

Ապրիլի 21-ին, Թիֆլիսի առաջնորդարանում կայացաւ մի ժողով, որը զբաղվեց սովեալների օգտին Թիֆլիսի հայերի մէջ հանգանակութիւն անելու հարցով։ Որոշվեց իւրաքանչիւր եկեղեցու ծխականների մէջ հանգանակութիւն անելու համար նրա ծխականներից ընտրել երկու կամ երեք մարդ և յանձնել նրանց ժապաւինեալ մատեաններ։ Դրա հետ միասին կազմվեց այն մարդկանց ցուցակը, որոնք պէտք է սկսեն ժողովարարութիւն անել։ Ժողովին հրաւիրված էին 53 հոգի, բայց ներկայ էին միայն 17 հոգի։ Լսում ենք, որ ժապաւինեալ մատեանները արդէն պատրաստված և յանձնված են եկեղեցիներում նշանակված անձանց։ Տարաբաղդաբար, մի քանի հոգի յետ են ուղարկել առաջնորդին մատեանները, հրաժարվելով հանգանակութիւն անել։

—

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցում ապրիլի 25-ից սկսվել են հարցաքննութիւնները և վերջանալու են յունիսի 4-ին։

—

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Մի խումբ վանեցիներից 15 ր. 2) Տրապիզոնից, Մկրտիչ Թիրիաքեանից 2 ր. 3) Թիֆլիսից, Մնացական Էլչեանից 1 ր. 4) Նոր-Բայազէտից, Հայրապետ Աւետիսեան Ալօի-Ղազարեանից 2 ր. 5) Գումրիից, Մովսէս Հայրապետեանից 1 ր։ Ուրեմն նախկին 3104 րուբլի 28 կ. հետ այժմ ունենք 3125 ր. 28 կոպէկ։

—

Երկրագործութեան և պետական կալուածների նորակազմ մինիստրութիւնը որոշել է ունենալ իր սեփական օրգանը՝ «Извѣстія» անունով, հրատարակելով ամիսը երկու անգամ։ Այդ օրգանի առաջին համարը այս օրերս լոյս է տեսել և նոր խմբագրութիւնը թերթի նպատակը հետևեալ կերպով է բացատրում։ «Նոր մինիստրութիւնը կազմվելով, հարկաւոր է ունենալ տպագրական մի այնպիսի օրգան, որի մէջ այդ մինիստրութեան գործունէութեամբ հետաքրքրվողները կարողանային գտնել բոլոր լինելի վարչական և օրէնսդրական կարգադրութիւնների մասին տեղեկութիւններ, ինչպէս և այդ կարգադրութիւնները առաջ բերող պատճառների բացատրութիւնը»։

—

Ստացանք յօգուտ Երևանի և Կարսի նահանգների սովեալների. 1) Կուպիանսկից (Խարկօվի նահանգ), Կարապետ Իգըլաշեանից 50 ր. 2) Գումրիից, Մովսէս Հայրապետեանից 10 ր. 3) Շուշուց, հինգ եղբայրներից, Մկրտիչ Յովհաննէս, Սիմէօն, Եղիշէ և Իսահակ՝ 3 ր. 4) Նոր-Բայազէտցի Հայրապետ Աւետիսեան Ալօի-Ղազարեանից 3 ր. 5) Թիֆլիսից, անյայտ ումն 60 կոպ.։ Ուրեմն նախկին 511 րուբլի 65 կ. հետ ունենք 578 ր. 25 կ.։ Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 2509 րուբլի 25 կոպ., ուղարկել ենք 1931 րուբլի։

—

Արտասահմանի լրագիրները հաղորդում են, որ Մեսրովպ արքեպիսկոպոս Սմբատեան նշանակված է տեղապահ։ Մենք ստիպված ենք այս անգամ էլ այդ լրագիրների սխալ և սուտ լուրը հերքել, յայտնելով որ Սմբատեան արքեպիսկոպոսը տեղապահ չէ նշանակված։ Գուցէ Էջմիածնում մի այդպիսի մտադրութիւն կայ,—բայց խօմ չէ կարելի ամեն մի մտադրութիւն, որ պտտում է վանական խուցերում, հաղորդել իբրև իրագործված փաստ։

—

Մեզ հաղորդում են, որ պ. Ն. Ագբէլէվ, Ս. Պետերբուրգի ռուսաց աստղագիտական ընկերութեան հիմնադիր—անդամը, կարդալու է երեք դասախօսութիւն քանկային թատրոնում, ի նպաստ Թիֆլիսի վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան, առաջինը ամսիս 25-ին, երկրորդը 29-ին և երրորդը մայիսի 1-ին։ Դասախօսութիւնների նիւթն է ովկիանոսի և երկնքի ուսումնասիրութիւնը միջին դարերի վերջում և մեր ժամանակ։

—

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Կարսի ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Վարչութիւնս շնորհակալութեամբ ստացաւ տեղական ճիւղի ընդհանուր ժողովի նախագահ գերապատիւ Նահապետ վարդապետից 667 ր. 20 կ., որ յանուն Կարսի սովեալների ստացվել էր տիկին Հեղինէ Տէրեան-Կորգանեանի կողմից Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութեան ձեռքով։ Սոյն գումարը ուղարկելով վարչութեանս, գերապատիւ հայր նախագահը կարգադրել էր. ա) 400 ր. յատկացնել աղքատների համար Կարսում բացվելիք ձրի ճաշարանին. բ) 200 ր. համաձայն Բարեգործական ընկերութեան խորհրդի պ. Նախագահի հեռագրական խնդիրքի, ուղարկել ընկերութեան Կաղզուանի ճիւղի վարչութեան. գ) 67 ր. 20 կ. յանձնել Բաշ-Քեադիկլար գիւղի հայոց երկսեռ դպրոցի աշակերտների համար բացվելիք ձրի ճաշարանի կառավարիչ՝ նոյն դպրոցի պ. ուսուցչին։ Վարչութիւնս կատարելով վերոյիշեալ կարգադրութիւնը, պարտք է համարում յայտնել իր խորին շնորհակալութիւնը նուիրատու մեծարգոյ տիկին Հեղինէ Տէրեան-Կորգանեանին և Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութեանը»։

—

Ապրիլի 23-ին, գիշերվայ ժամը 11-ին, Թիֆլիսում կարկուտ եկաւ, բաւական խոշոր հատիկներով։ Ինչպէս երևում է, շրջակայ այգիները անվնաս չեն մնացել։

—

Շուշուց ստացել ենք մի քանի թղթակցութիւններ, որոնցով բողոքում են այնտեղի մի քահանայի զեղծումների և գործերի դէմ։ Մենք պատրաստ ենք հրապարակ հանել ամեն մի զեղծում և ամեն մի տգեղ վարմունք, գործէ դա մի հասարակ քահանայ, թէ մի աւելի բարձր պաշտօնեայ։ Տարաբաղդաբար, Շուշու թղթակցութիւնները չենք կարող տպագրել լոկ այն պատճառով, որ նրանք գրված են իբրև պատասխան այնպիսի մի թերթի, որի անունը տալը մեր լրագրի էջերում զզուանք է պատճառում անխտիր մեր բոլոր ընթերցողներին։ Թող հաղորդեն մեզ փաստեր անկախ կերպով, ոչ իբրև պատասխան այս կամ այն հայկատակ յօդուածագրի,—և մենք միշտ պատրաստ ենք տպագրել։

—

Կիրակի, ամսիս 24-ին, Դիդուբէյի մօտ տեղի ունեցաւ երկրորդ ձիարշաւը։ Երեք մրցումի մէջ յաղթող հանդիսացան Տուգանօվի ձիերը՝ Էլբուրգան, Էդել և Էլբրուս երկրորդ։ Մրցանակի արժանացան Ջիւլգադարօվի Նադիրշահը և իշխան Օրբելեանու կառքի ձիերը։ Տուգանօվը ձիերի մի մեծ երամակ է պահում Հիւսիսային Կովկասում և յայտնի է իբրև հմուտ ձիաբոյծ։ Ջիւլգադարօվի ախոռը գտնվում է Ելիսաւետպօլի գաւառում, սեփական կալուածքում։ Նա սկսել է բարւոքումներ մտցնել ձիապահութեան մէջ, բայց դեռ չէ կանօնաւորել գործը բոլորովին։

—

«Արարատի մէջ կարդում ենք. «Սինօդն Ս. Էջմիածնի ըստ յայտարարութեան գործակալին Նոր-Բայազէտի 31 հոկտ. 1893 ամի. Թ. 499, կարգադրեց խնդրել Երևանի նահանգապետից արգելել Մաղրայ, Ջօթ, Տաշկեան և այլ գիւղերի պարսիկ բնակիչներին, որ ձեռնամուխ չը լինին Հայոց վանքերի, եկեղեցիների, գերեզմանատների և եկեղեցական աւերակների հնութեանց»։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց ծխական դպրոցների վարժուհիները և ուսուցիչները հանգանակել են յօգուտ սովեալների 1,034 րուբլի, որը արդէն ուղարկված է Էջմիածին, Վեհափառ Կաթողիկոսին։

—

ՊԵԱՏԻԳՕՐՍԿԻՑ մեզ գրում են ապրիլի 20-ից. «Այսօր այստեղ հոգաբարձու պ. Սվէչնիկեան և ուսուցիչներ՝ պ.պ. Թառումեան ու Տէր-Աւետիքեան ժողովարարութիւն սկսեցին յօգուտ սովեալների։ Հանգանակութիւնը աջողութեամբ առաջ է գնում»։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Այս տարի սպասվում է այստեղ ամառանոց եկողների մեծ բազմութիւն. ամբողջ ամառը այստեղ պէտք է մնայ զինւորական երաժշտական խումբը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Մայրաքաղաքի «Новости» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գրում է հետևեալը.

«Հայոց Աշըգեան պատրիարքը խնդրեց ներումն շնորհել իրան վրա ատրճանակ պարպող հային, բայց պատրիարքի միջնորդութիւնը դեռ ևս ոչինչ հետևանք չունեցաւ: Կ. Պոլսում ցանկանում են անպատճառ իմանալ, թէ այդ հայն համախոհներ ունի թէ ոչ, և այդ պատճառով վճռված է շարունակել քննութիւնը: Նորերս կալանաւորվեցին էլի երկու հայեր, բայց նրանց հարցաքննութիւնից ոչինչ նոր տեղեկութիւններ չը ստացաւ ոստիկանութեան մինիստրը, որը ինքն է ղեկավարում քննութիւնը:

«Այդ գործը նորից ստիպեց ուշադրութիւն դարձնել հայոց պատրիարքի դրութեան վրա, որը, հայոց սահմանադրութեան տեսակէտից, անկանոն է: Սուլթանից հաստատված այդ սահմանադրութեան զօրութեամբ, պատրիարքարանի խառն ժողովի լիազօրութեան ժամանակամիջոցը լրանալուց յետոյ, պէտք է նոր ընտրութիւններ կատարել: Միայն այդ պայմաններում պատրիարքարանի գործերում կարող է լինել կարգ և հաւասարակշռութիւն: Մինչդեռ այդ ժողովի (կրօնական և քաղաքական) երկու անդամների՝ Սիմոն պէյի և Մաղսուտի լիազօրութիւնների ժամանակամիջոցը վաղուց լրացել է (անդամները երկու տարով են ընտրվում), բայց կառավարութեան ցանկութեամբ այդ երկու անձինք այժմ էլ շարունակում են մնալ իրանց պաշտօններում:

«Կառավարութիւնը դէմ է հայոց ընդհանուր ժողով հրաւիրելուն, որին պէտք է մասնակցեն բոլոր գաւառների պատգամաւորները և պատուաւոր անձինք, վախենալով անկարգութիւններից, և այդ պատճառով, խորհրդի դրութիւնը, դրա հետ միասին և պատրիարքի դրութիւնը անկանոն վիճակ ունեն: Սակայն շատերը կարծում են, որ եթէ առաջուց ոստիկանական պատշաճաւոր միջոցներ ձեռք առնվեն Գում-Գափում (հայոց պատրիարքարանը), ժողովը շատ հանգիստ կարող է անցնել: Սակայն ոստիկանութեան մինիստր Նազիմ-բէյ համակարծիք չէ դրան, և պէտք է խոստովանել, որ մինչև այժմ փաստերը յօգուտ նրա են խօսում: Պատրիարքը, զգալով իր դրութիւնը, վաղուց արդէն հրաժարական տուեց, բայց կառավարութիւնը չընդունեց նրա հրաժարականը, և նա ստիպված էր մնալ իր պաշտօնում: Ահա այդ դրութեան մէջ են գործերը, և դժուար է երևակայել անգամ, որ դրանք կարող են փոխվել, որովհետև Բ. Դուռը անպայման չէ ցանկանում հայերի ընդհանուր ժողով գումարել՝ խորհրդի նոր անդամներ ընտրելու համար»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են, որ սուլթանը ստորագրեց մի իրադէ, որով գոհացում է տրվում բուլգարական էկզարխի պահանջներին՝ Մակեդօնիայի բուլգարական դպրոցների վերաբերմամբ, և իրաւունք է տրվում էկզարխին՝ բուլգարական երկու եպիսկոպոսներ նշանակել Նեվրօկօպում և Պէլէսում: Բացի դրանից, սուլթանը հրամայեց ձրիաբար հողի մի կտոր տալ էկզարխին՝ բուլգարական սեմինարիա հիմնելու համար Կ. Պոլսում և թոյլ տուեց նրան անշարժ կալուածքներ ձեռք բերել Պէրայում:

—«Թէրջիմանի Հագիգաթ» լրագիրը նկարագրում է այն սարսափելի հրդեհը, որ ապրիլի 10-ին տեղի ունեցաւ Կ. Պոլսում և մոխիր դարձրեց Թիւրքաց մայրաքաղաքի «Hotel d'Angleterre» գլխաւոր հիւրանոցներից մէկը, որ գտնվում է Բէկ-Օղլի բանուկ տեղի վրա: Այդ հիւրանոցը բացված էր Կրիմի պատերազմի ժամանակից և լաւ համբաւ ունէր. այնտեղ էին իջնում գլխաւորապէս եկւոր օտարերկրացիները: Վերոյիշեալ հիւրանոցում բնակվող մասնաւոր անձինքներից ամենից շատ վնասվեցին անգլիացի գիտնական Դավէյ և պարսից Շահի նախկին պալատական բժիշկ Տուլուզանի այրին: Կատարելապէս այրվեց գիտնական Դավէյի հարուստ գրադարանը և Թիւրքիային վերաբերեալ նրա մի ձեռագիր աշխատանքը, որ պատրաստ էր տպագրութեան համար. իսկ տիկին Տուլուզանը զրկվեց իր բոլոր թանգագին քարերից և շորերից:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 ապրիլի: Հրատարակված է զինուորական մինիստրի հրամանը, որով կանչվում են զինուորագումարին մասնակցելու համար պահեստի այն պրապօրշչիկները, որոնք ապրում են եւրոպական Ռուսաստանի նահանգներում և Կովկասում և որոնք պրապօրշչիկի աստիճան ստացել են 1893 թւին, նոյնպէս և նրանք, որոնք զինուորագումարին չեն մասնակցել նախընթաց 4 տարիներում:—«С. Петер. Вѣд.» լրագիրը լսել է, որ պետական խորհուրդը հաստատեց ամեն տեսակ մթերքների և կենսական պիտոյքների կեղծումների դէմ օրէնքը:

Կ. ՊՈԼԻՍ, 22 ապրիլի: Տիեզերական պատրիարքի հրաւիրած սինօդը բողոքեց բուլգարական նոր եպիսկոպոսներ նշանակելու դէմ Մակեդօնիայում:

ԼԻՒՏՏԻԽ, 22 ապրիլի: Դոկտոր Րանսօն իր կնոջ և դոկտոր Բօղարի հետ տուն վերադառնալով, նկատեց չեմքի վրա մի գործիք վառած պատրոյգով: Րանսօն վերցրեց գործիքը, որը պայթեց և Րանսօն ընկաւ վէրքեր ստանալով դէմքի, կրծքի և ոտի վրա: Րանսօնի կնոջ ձեռքը վիրաւորվեց. վիրաւորված են նոյնպէս Բօղար և մէկ անցորդ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի: Թագաժառանգ Ցեսարեվիչ վերադարձաւ արտասահմանից:

ԼՕՆԴՕՆ, 23 ապրիլի: Վինդզօր ամրոցը ժամանեց այցելելու Վիկտորիա թագուհուն՝ պրինցէսա Ալիսա:—Անարխիստ Պօլտի դատապարտված է 10, իսկ անարխիստ Ֆէրրարա 20 ամեայ բանտարկութեան:—Ընտրողներին ցուցակագրելու և ընտրողական րէֆօրմի վերաբերեալ բիլլը ընդունեց համայնքների ժողովը երկրորդ ընթերցանութեան ժամանակ:

ԲՐԻՒՍՍԷԼ, 23 ապրիլի: Լիւտտիխում անարխիական նորերս եղած փորձերի պատճառով, շուտով մի օրէնք կը մտցվի բացառական միջոցներ ձեռք առնելու մասին:—Այսօր գիշերը կալանաւորված են Լիւտտիխում 13 անարխիստներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 ապրիլի: Պետական խորհուրդը շուտով կը քննի բանկային հիմնարկութիւններին վերաբերեալ կանոնների փոփոխութեան նախագիծը:

ԱՆՏՎԵՐՊԷՆ 24 ապրիլի: Այսօր հանդիսաւոր կերպով բացվեց միջազգային ցուցահանդէսը թագաւորի, թագաւորական ընտանիքի և հասարակութեան մեծ բազմութեան ներկայութեամբ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. միզաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների:

Կ. Գ. ՁԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և ներքդային հ.

Դ. Դ. ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—$11^{1}/_{2}$—$12^{1}/_{2}$ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—$12^{1}/_{2}$—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^{1}/_{2}$ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—$7^{1}/_{2}$ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—$7^{1}/_{2}$ ականջի, կոկորդի և քթի ու ներքդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ: (№ 72)

Մարտի 20-ին լոյս տեսած պատկերը՝ 16 Հայ կաթողիկոսների, պատրիարքների, և նշանաւոր եպիսկոպոսների, փոփոխութեամբ լոյս տեսաւ երկրորդ տպագրութեամբ ապրիլի 7-ին: Գինն է 60 կոպէկ Թիֆլիսում: Օտար քաղաքացիների համար 1 րուբլի է, ճանապարհածախսով: Գումարով ցանկացողներին 20% զիջում:

Դիմել պէտք է այս հասցէով՝ Тифлисъ Андреасу Оганесянцу, Լօրիս-Մելիքօվսկայա փողոց, տուն Մուխրանսկու, № 13:

(№ 46) 1—3

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՕՍՍԻԱ"

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Ընկերութիւնը ընդունում է

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ ընկերութեան օգուտներին:

1894 թւի յունվարի 1-ին «Ռօսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 րուբլի դրամագլխով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ

թէ առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների և բանւորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները՝ զիլլիզենզի փոխարէն:

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն):

ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. ապահովագրութիւն նաւերի:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:

Ապահովագրական տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում: (№ 42) 3—15

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթևեկ, կիսաթոշակաւոր և թոշակաւոր աշակերտներ: Պատրաստում է կլասիքական գիմնազիայի, րէալական ուսումնարանի, կադէտների կորպուսի և այլ միջնակարգ ուսումնարանների համար:

Թիֆլիս, Գանօվսկայա փողոց, № 11, սեփական տուն:

(№ 35) (եր. և շ.) 9—25

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նագօրնայա փողոց, № 9)

Ցանկացողք, ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ:

Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.

№ 88 17—20

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:

(№ 145) 143—150

ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ



բժշկական դէպարտամենտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում:

№ 128 (91 թ.) 18—40

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Апрѣля 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.